


մեռնի եւ կենաց ջրոյն համար, թէ խմալը չը պիտի այլ եւս ծարաւի և այլ :

Ապա ուրեմն, ամեն քրիստոնեաց՝ թէ այր լինի թէ կին, թէ ծեր լինի թէ աղաց, թէ հարուստ լինի թէ աղքատ, թէ մեծատուն լինի և թէ արնանի, եթէ կը սիրէ իւր կեանքը, եթէ կը ճանաչէ իւր հոգւց արմեքը և եթէ կը փափաքի աղքիլ յաւիսեան, պէտք է Ա. Աւետարանը ուստի իւր մանկութենէն, որովհետեւ ՚ի մանկութենէ Աւետարանի հոգւով կրթուած երախսցն՝ իւր խելահասութեան ժամանակ լիովին կ'զգայ նորա քաղցրութիւնը և իւր կենաց մէջ ցցց կը տայ նորա պառուղները :

Գ. Ա. Շահանեան:



ԶԳՈՒՇԱԽՈՐՈԽԹԻՒՆ

Ա.

Զգուշաւորութիւն, կամ զգուշ ըլլու կը սուի, երբ մեր կենակցութեան մէջ առ հասարակ ամեն մարդոց հետ մի և նոյն եղանակաւ չեմք վարուիր, երբ մեր ճշմարիտ բարեկամները՝ թը նամիներէն կը զանազանեմք և երբ ամեն մեր դէմն ելլովին մեր սիրալ չեմք քանար և ինչ որ կայ այն տեղ թէ մեր անձին նկատմամբ և թէ այլօց, չեմք թափեր անօր առջեւ։ Եթէ կենակցութեան մէջ այս եղանակ զգուշաւորութեամբ վարուիմք, կ'ըլլամք Արքաքայ իմաստունը, որոյ բերանը սըրտին մէջ է, իսկ ընդհակառակը եթէ առ հասարակ ամեն մարդկանց հետ

թէ առաքինի լինին, թէ մոլի, թէ բարեկամ և թէ թշնամի, թէ հաւատարիմ եւ թէ անհաւատարիմ, այս ամեն կարգի մարդկանց հետ երբ նման վարմունք կ'ունենամք, կ'ըլլամք այն յիմարը, որոյ սիրալ բերնին մէջ է :

Իրաւ է, որ կան թիւր բարցաւ խօսներ, որ ըստ իրենց մոլոր սկզբանց կ'աշխատին մարդկանց միջէն խարութիւնը վերցնել, կ'աշխատին, որ իմաստունին ՚ի գործ գրած զգուշաւորութիւններն ունայնացնեն եւ յիմարին անդգուշ ու կոյր կեանքը ընդհանրացնեն . բայց զնուր ջանք եւ ունայն վաստակէ այդպիսեաց աշխատութիւնը, քանի որ բնութեան և Աստուծոյ օրինաց գէմ մալսդին պայքար մի է : Անասունները, որ ընդհանրապէս բընական օրինօք, և մասնաւորապէս բընագդմամբ կը կառավարուին, չունին բնական լցու եւ ոչ բանական հոգի, այնու ամենայնիւ անոնց մէկ ցեղը՝ միւս ցեղին հետ չէ կարող կենակցիլ, նոյն իսկ մի և նոյն ցեղին ըլլովով հանդերձ եթէ տարբեր գաւառներու մէջ կը բնակին, գարձեալ անկարելի է, որ միւ մեանց հետ նման վարմունք ունենան և միւ նոյն բնական համակրութիւնը : Ասիկայ ամեն ոք գիտէ, վասն զի ընտանի կենդանեաց մէջ եւս կը տեսնուի : Աւստի անկարելի է մարդցն, որ բնական օրէնքէն զատ ունի բնական լցու, բանական հոգի և հոգեկան ամեն կարողութիւն . կը ճանաչէ, կը խորհի, կը դատէ և կը զգայ, մարդկանց մէջ խոփր և զանազանութիւնը զնէ :

Երբ կը տեսնեմ, որ այս ինչ մարդը զիս կը սիրէ իբրեւ իրեն անձը, իմ օդուտը կը խորհի իբրեւ իրեն անձնական օգուտար, ինձ հետ կը վշտակցի, երբ կը դրայ, որ վշտացած է սիրտս և հոգիս, ինձ հետ կուրախանայ, երբ

կը տեսնէ , որ հոգիս կը զմացի եւ կը բերկի . կը յուսադրէ և կը քաջոլերէ երբ լքեալ և յուսահատ եմ . ինչպէս կարելի է , որ ես եւս փոխադարձարար չը սիրեմ զինքը . իւր օգտին և բարւոյն համար ջանազիր չը լինի . չը վատանամ . երբ վշտոցած է . չուրախակցիմ . երբ ուրախ կը տեսնեմ . չը յուսադրեմ . երբ լքեալ և յուսահատ է : Ընդհակառակն մի և նոյն ժամանակ երբ կը տեսնեմ ուրիշ մէկը , որ թէ և իրեն շարիք մի ըրած չեմ և ոչ վնաս մի տուած եմ . այնու ամենայնիւ կ'ատէ զիս ոգւով չափ , գիշեր և ցերեկ իմ կորուստս կը նիւթէ . իւր օգուտը և շահը իմ կորստեան և անկման մէջ կը փնտուէ , իւր պատիւը իմ անպատուութեան մէջ և երջանկութիւնը , եթէ կարելի է երջանկութիւն համարել . իմ ապարազութեան մէջ . ինչպէս կարելի է որ այս պիտի մէկուն վերայ ջնրմ սիրտ ունենամ , համակրութիւն և սէր ունենամ ինչպէս տուաջին մարդուն վերայ . անձրս հաւատամ անոր , որ արդէն կորըստեան համար գուփ կը փորէ եւ կը պեղէ . կենացս գաւաճանն ու դահճանէ . անեարատ պատիւս անոր ձեռքը յանձնեմ , որ մրուել ու պղել զիսէ : Անկարելի եղած է այս ի սկզբանէ աշխարհիս եւ պիտի ըլլայ մինչ ՚ի վոխնան . քանի որ մարդը մարդոյն չը նըմանիր վարքով , բարքով , կեանքրով ու կերքով , անկարելի է միօրինակ կենացկ ցութիւն հաստատել աշխարհի մէջ :

Աշխարհի մէջ միօրինակ կենակ յութիւնը անկարելի համարելով՝ նըպատակնիս մարդկանց մէջ ատելու . թեան կերպը բորբոքել և զօրացնել չեն արդարացնել . այլ միմիայն զգուշաւոր կենաց յորդորել . ատելը միշտ վայրենութիւն է . իսկ զգուշութիւնը իմաստութիւն . Ոչ մի կը օրիսունի .

ական կրօնին չափ մարդասիրութիւն և եղբայրափրութիւն ուստ ցածէ . նորաերկնային հեղինակը եղբայրափրութիւնը . Աստուածափրութեան հաւասարքարզեց , այնու ամենայնիւ նա պատմիրեց զգուշլինիլ Փարփսեցոց խմարէն , այսինքն չար ու նեհետաւոր մարդկանց չարութենէն և նենգութիւներէն . զգուշլինիլ անսնցմէ , որ կը գացթակ զեցնեն իրենց չար զօրծերով և վատօրինակներով . զգուշլինիլ և վախնակ անսնցմէ , որ իրենց զեղծ բարցականով կ'ապականեն ընկերութեան բարքը , անմեղութիւնը կը հալածեն . միամիտ լինիլ ազաւնիի պէս , բայց նա և խորամանկ օձի չափ , սրպէս զի ձանաչն ամեն ծառ իւր պատուղէն , չը խարուին գառնազգեստ գոյլերէն , յանձնատուր չը լինին խարամանկ աղուեններուն :

Ուրեմն զգուշաւորութիւնը Աւետարանի ուսուցած մէկ պարտաւորութիւնն է . ինչ որ Աւետարանը կ'ուսուցանէ կենացունոկ եւ փրկարար է . կենաց աղքիւրը Աւետարանն է . հետեւաբար ով որ կուղէ անդորր և խազաղ կեանք ունենալ , անդորր և խազող սիրտ ու խիղճ ունենալ , պէտք է զգուշլինի իւր կենաց ամեն վայրկեան ներուն , զգուշլինի կենաց ամեն գեղքերուն մէջ . զգուշլինի կենաց աշխարհ կեղծեաց գաւշութիւնը . զգուշլինի կամ սրտակից ընտրելու ժամանակ . զգուշլինի բարերարելու վայրկենին . որովհետեւ աշխարհ կեղծեաց և պատրանաց գաւշութիւնը . ցորեն կը յանես , որոմ կը քաղես . բարիք կը սփռես , չարիք կը գտնես . անկեղծութիւն եւ բարեկամութիւն կը ներշնչես , թշնամութիւն եւ նենդութիւն կը ներդնչես : Երբէք զգուշաւոր իմաստութիւնը իւր լաւ ունակութեան երեսէն վնաս մի տեսած չէ . երբէք լսուած չէ , որ այս ինչ ոք իւր

չափազանց զգուշուոր կեանքին համար նախառառած և անպատճ եղած է , արհամարուած է ընկերականութենէն , արտաքսուած է միաբանական կեանքէ . բայց ընդհակառակն ակն ամեն օր , ամեն վոյրկեան կը առանեմք յիմար անզգուշն կրած աղէտները , ամեն ժամանակ կը տեսնեմք , որ անզգուշը վնասակար եղած է թէ իր անձին և թէ այլոց . վերջապէս կեանքի ամեն քայլափախին կը պատահիմք թրշուառ անզգուշն , որ կամ ՚ի գատարն և կամ ՚ի բանտ կը տանին :

Բ.

Ամեն տեսակ զգուշուորութենէն կարեւորագոյնն է լեզուի , կամ խօսելու զգուշաւորութիւնը . որովհետեւ աշխարհի մէջ չը կայ աղէտ մի , չը կայ թշուառութիւնի մի , որ լեզուի անզգուշութենէն յառաջ եկած չը լինի . ամեն մեզք ամեն չարիք ծնունդ են անսանձ լիզուի և անգուռն բերնի : Կուզես կեանքդ քայլրացնել , պատիւ և արժանիք ունենալ ընկերութեան մէջ , լեզուդ սանձելու իմաստութիւնը ունեցիր . դարձեալ կուզես ապերջանիկ կեանք ունենալ և անպատռութեան տղմին մէջ թաւալել . լեզուիդ սանձը խզէ և բերնիգ փականքը խորտակէ . կարող ես այնուհետեւ ամեն չարիք զիւրութեամք գործել , անհատներ և ընտանիքներ բարոյապէս սպաննել , քայլաքներ և աղդեր յուզել և երկ պառակել . եղայր՝ եղոր գէմ զինել , հայրը՝ որդւոյն , որդին՝ հօրը հետ թշնամոցնել , անկեզծ բարեկամներ միմեանց գէմ կասկածներով լուռը , Վերջապէս լեզուն է , որ աշխարհի խազալութիւն կը տայ եւ լեզուն է , որ մէկ խօսքով , մէկ բառով աշխարհի խազալութիւնը կը բառնայ և պատե-

րազմի հուրը կը բորբոքէ . լեզուն է , որ շատ անգամ աշխարհաւեր զենքերը աշխարհաշնն գործիներու կը փախէ , մարդասպան սուրերն խափ ու մանգաղ կը ձուլէ և գործեալ լեզուն է , որ ընդհակառակն շատ անգամ խօսին ու մանգաղը գաշցն կընէ և զրիչն խիչ՝ եղայրաբարձրան ներ : Ահա լեզուն , որ զգուշուորութեամք աշխարհի կը չնիէ , խի անզգուշութեամք զաշխարհ յաւեր և յապականութիւնը կը գործուցանէ :

Ուրեմն զգուշուոր լեզուն տւելի օգտակար բան մի չը կայ , և ոչ վոտեգաւոր՝ անզգուշ լեզուն , Կան մարդուկի , որք բարձրավին տգէտ՝ անկարող են պէտք եղած զգուշութիւններն ընել , անկարող են անձեւ իրենց լեզուն , կ'աւերեն առանց զգալու . կը չնին առանց զիւրակցութեան , կը վիրաւուրեն առանց նպաստակի , կը բուժեն յանդէտս , այսպիսի կեանքը չը դանաշ զնիք անասնական կեանքէն , որ բերման և զիւրաց հոսանքաց տունեւ խոզովիք մի է : Բայց կան ալ մարդուկի , որ տգէտ չեն , անպատռութիւն կը համարեն իրենց անձին տղիւութիւնը և տգէտին հետ կենացելը . Աղջմնի իմաստութենէն տւելի իմաստութիւն ունենալ կը կարծեն . զիտեն կենաց ինչ ըլլուը , զիտեն մարդկացին ընկերականութեան պէտքերը , անոնց այլ բիւրները , ինչ միջոցներով ձեռք բերուիլը , այլ սակայն աւելի ոցդպիսիներն , որ իրենք զիրենք ընկերականութեան մած բարերարներն կը համարին , իրենց անսանձ լեզուաւ ընկերականութեան անդորրութիւնը կը ասպնապէն , ընտանեկան խաղաղ յարկիր իրուութեանց և յուզեանց ալեաց կը մատնեն . Խղզվիդոց գարաւոր ծառապատճեամք և հաւատարմութիւնը կասկածանաց կենթարկին յաջ տի-


բաղ իշխանութեան և արտօքս անհընարին աղբաներ և վիշտեր կը կուտակեն հասարակութեան գլխուն։ Այս պիտի լեզուները մարդկութեան ցեցերըն են, որ կ'ապականեն կեանքը, կ'առարկանեն մարդկային արժանիքը, կ'անդամ հատեն տաղանդն ու հանձորը և կը նաև մայնեն իմացականութիւնը։

Լեզուն, որ Աստուծոյ մարդկանց շնորհած գերագոյն պարգեւներէն մինէ, որով մարդը կը զանազանի անբանեն, հոգին՝ նիւթէն, բանականութիւնը կը տիրէ անբանութեան, չարութեան միջացաւ ընկերականութեան մեծ պատուհաս մի եղած է. կը խոցէ, կը վիրաւորէ և կը մահացնէ սիրոյ զիմակաւ, կը թիւնաւորէ մեղս ջամփեւով։ Ի՞նչ պէտք է ընել երկինց այս մեծ պարգեւը իւր նորատակին ծառացեցրնելու համար, մարդկութեան այս մահարեր ախտը գարմանելու համար։ Ս. Գիրքը, որ ամեն բարյական ցուերու մեծ բժիշկն է, կը որատուիրէ դադրեցնել լեզուն չարութեան և շրթունքն նենդութիւն նենդութիւն իսուել և իսուել գրեթէ մօրը գիրին եղաղ մանկիկն սկսեալ՝ մինչեւ գերեզմանին դուռն հասնող ծերունին, որ սակաւիի մի եւս իւր յետին հրաժեշտը պիտի առ աշխարհին, սովորութիւն եղած է իրեւ պարտաւորութիւն, մանուկը իւր հասակակցին, մանկան գէմ չարութիւն և նենդութիւն կը նիւթէ և կը խօսի. երիտասարդդը երիտասարդին և ծերունիին գէմ. իսկ ծերունին թերեւս ամեն հասակի գէմ։ Գիւրին և շատ գիւրին է այս համաճարակ հիւանդութիւնը բը յըշելը, եթէ ձնողը իրենց որդւոց,

ուսուցիչը՝ իրենց աշակերտաց, հոգեւոր հովիւր՝ իրենց հօմին ուսուցանեն ըստ իրենց որբազան կոչման լեզուի մեծ պաշտօնը. ուսուցանեն երիխ զած խորհրդածութեամբ լեզուի նորհրդաւորութիւնը, անցնից զրոշմէն նոցա մարդին եւ սրտին մէջ, որ Աստուծութ տուած է այս գերագոյն շնորհը մարդոյն միմիայն զինքն օրհնելու. մեր պէտքերը, մեր ցաւերը և վիշտերը իրեն ներկայացնելու. իւր փառաց և մեծութեան հռչակ ու քարոզ լինելու. վշտացեալ եղբայր միմիթարելու, յուսահատութիւնը քաշուի այս մեծ պաշտօնը կը գրուի սրտաւորէ մէջ, չարութեան և նենդութիւնները մեր նմանեաց հաղորդելու. երբ լեզուի այս մեծ պաշտօնը կը գրուի սրտաւորէ մէջ, չարութեան և նենդութիւններն կրակը իսպառ կը մարի. ընկերականութեան կեանքը արդի ապականեալ կացութենէն կը փրկուի, բարյական կեանքը կը սրբուի, մարդը կը բարձրանայ և արժանիքը կը վարձարաւի։

Ո՞րչափ երջանիկ պիտի լինէին աղգերը. քանիք խաղաղ և անդորր պիտի լինէր մարդոյն վիճակը, եթէ ծրնողը, ուսուցիչը և հոգեւոր հովիւր իրենց պարտաւորութիւնը կատարելով խօզի մոօք՝ լեզուն աստուածագիծ սահմանին մէջ պահպանէին։ Բայց ովլ պիտի ուսուցանէ ասոնց, որ շատ անգամ ինքնանք կ'եղջանեն լեզուի ամեն որբազան օրէնքները. ովլ պիտի ուսուցանէ անսոնց, որը կոչումն ունին հրապարակու ժողովրդեան բարյականութեան ուղղութեանը հսդ տանելու, նորա լրտսաւորութեան և յառաջադիմութեան համար հաւատարամաբար աշխատելու, այլ սակայն իրենց անսանձ լեզուաւ և անդուռն բերանով սրտաւոր կը լինին ժողովրդեան

բարուց տպականութեան, սբառձու
կը լինին ժայռվագեան աղքափց և թրւ
ուառութեան, կ'ունահարին նորա
յառաջադիմութիւնը, մանաւանդ՝
վերն ատենեերս, այս փափուկ ժա-
մանակիս մէջ, մի քանի խմբագիրներ,
իրենց ապիրառութեան ծարագոյն
փարձը տուին, իրենց անզգուշեղուն
գրեթէ մինչեւ ազգամատնութեան գը-
ժոխային գերեր կը խազայ
Կաեմք և մեք, սրտիս զի մի գուցէ
մեր սրտի կրտիթէն մեղմնչեմք շեղուի
նուիրական օրինաց դէմ:



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔ

(Հարունակութիւն, տես թիւ 7.)

Դ. ԾԵՐԱՆԻՒԹԻՒՆ:

Ամենայն ինչ կը փոփոխի բնու-
թեան մէջ, ամենայն ինչ դէպ յապա-
կանութիւն կը դիմէ: Մարդկային մար-
մինն եւս հազիւ հասած կը լինի կո-
տարելութեան կէտին և անագան կը
սկսի զօրութեան, հաստառութեան
եւ կարողութեանդ սցն բարձրագոյն
կատարէն աստիճանաբար դէպ ՚ի վար
խոնարհի, որ ըստ օրէ ամենայն ինչ
կըսպառի, կ'ապականի և կ'ոչնչանաց
վերջապէս: Փօխիսաւթիւններն ու կո-
րուսոր բազմաթիւ տարիներ անզգո-
վ կը մնան, մինչեւ որ արտաքին նը-
կարագիրներ ու նշաններ ապացուցա-
նեն զանոնք: սակայն եթէ մէք մոռ-
գիր զնեմք մէր ներքին կարողու-
թեանց միջացաւ մեր կենաց վիճակը,
եթէ չպատրիմք մէք զմ:զ յուսով և

անձնասիրութեան տենչանօք: վաղ
կարեմք զգով մեր տարիներու ծան-
րութիւնն, իմանալ մերներքին և ար-
տաքին կարողութեանց նուազումը և
ճանաչել մէր կենաց յաջորդական ըս-
տառումը:

Երբ մարմինը ընդունած կ'ըլլայ
աճման կատարելութիւնը թէ երկայ-
նութեամբ և թէ լայնութեամբ, կը
սկսի այնուհետեւ առաւելուլ հաս-
տութեամբ: այս սկզբնաւորութիւնը
սպառման առաջին ձեռնարկն է: ու
բայց հետեւ այս առաւելութիւնը ներ-
քին աճման կամ տարածութեան շա-
րունակութիւնն ըլլալով, չեն կրնար
մասնակիլ այսմ մարմնոյն ամեն մա-
սունքները և ստանալ ոյժ եւ զօրու-
թիւն: այլ յաւելեալ հիւթերէ յա-
ռաջ եկած ըլլալով կը բեռնաւորէ
մարմինը անօդուտ ծանրութեամբ մը:
Այս հիւթը ճարպն է, որ կը սկսի գո-
յանալ սովորաբար 35 կամ 40՛ տար-
ւոյն մէջ, և որչափ սա աւելնայ, մար-
մինը կը տկարանայ, կը կորուսանէ իւր
թեթեւութիւնն ու տարագաշարժու-
թիւնը, տեսակի յաջորդութեան զ-
բութիւնը կը նուազի, անդամները կը
դանդաղին և քանի որ տարածութիւ-
նըն աճի, կարողութիւնը կը պակսին:
Բաց յայսմանէ, սոկորներն և մար-
մնոյն այլ կարծը մասերն եւս ընդու-
նած ըլլալով իրենց կատարեալ տա-
րածութիւնը թէ երկայնութեամբ և
թէ լայնութեամբ, կը սկսին այնուհե-
տեւ աւելի ևս կարծրանալ, մնուցիչ
շաբարտնիւթք, որբ առաջ ծաւալի
աճման կը ծառայէին, կը սկսին միմիսոյն
զանգուածն յաւելու ներմուծուելով
այս մասանց մէջ, որով հետզհետէ
կարծրանալով, թաղանգները՝ կոճկա-
ւոր, կոճիկներն ակրաւոր և սոկերը
աւելի կարծր մարմններ կ'ըլլան, բո-
լոր նուսոր և մանր թելելն կը պնդա-